ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ

«ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԸ ԻՆՁ ԳԵՐԵՑ ԱՆՎԵՐԱՊԱՀՈՐԵՆ»

Վերջերս Արցախ էր ժամանել ֆրանսահայ բժիշկների միության անդամ, հանրահայտ բժիշկ,ուրոլոգ-վիրաբույժ Գևորգ Կեպենեկյանը: Ընդամենը երկու օր մնաց Արցախում, մոտիկից ծանոթացավ տեղի բժշկական մի շարք ծառայությունների, բժիշկների աշխատանքային պայմանների հետ: Նշանավոր վիրաբույժը, ապրելով Ֆրանսիայի Լիոն քաղաքում, բոլոր թելերով կապված է մայր Հայաստանի հետ. Միայն վերջին երեք տարվա ընթացքում նա չորս անգամ այցելել է Հայաստան և հարյուրավոր բարդ վիրահատություններով կյանք է պարգևել բազմաթիվ մարդկանց: Նա ֆրանսահայ բժիշկների միության անդամ է, իսկ միության գլխավոր նպատակը մայր Հայաստանին, նրա մարդկանց օգնելն է:

Մեծանալով հայկական ավանդույթներով հարուստ ընտանիքում, Գ. Կեպենեկյանը դաստիարակվել է զուտ հայկական ոգով: Նա լավ գիտեր ինչպես Հայաստանը, նույնպես էլ Արցախ աշխարհը: Եվ եկավ ուրիթը, որ իրականանա իր սրտի բաղձանքը՝ լինել Արցախում, տեսնել այն, մոտիկից շփվել, ծանոթանալ նրա մարդկանց հետ, ապրել, խորհել նրանց ցավերով ու երազանքներով:

— Ինձ Արցախ է բերել ոչ միայն և ոչ այնքան հայի հետաքրքրությունը, որքան հայկական արյան կանչը, — ասում է պարոն Գևորգ Կեպենեկյանը, — հայը, որտեղ էլ լինի, չի կարող անտարբեր լինել Ղարաբաղյան շարժման նկատմամբ: Ինձ Արցախ է բերել նաև բժշկի իմ առաքելությունը:

Այո՛, բժշկի առաքելությամբ, Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի դոցենտ Անդրանիկ Մալխասյանի հետ, որը ուղեկցում էր անվանի բժշկին, հենց տեղում, մարզային հիվանդանոցում կատարեց մի քանի անհետաձգելի և բարդ վիրահատություններ: Հիվանդանոցի ուրոլոգ-վիրաբույժներ, բաժանմունքի վարիչ Էդվարդ Պատվականյանը, Վարդան Ղուկասյանը, Բորիս Դանիելյանը և ուրիշներ, մասնակցելով վիրահատություններին, մոտիկից ծանոթացան վիրաբույժ Կեպենեկյանի վիրահատման տեխնիկային, վիրահատական գործիքներից ու սարքավորումներից օգտվելու եղանակներին:

Պարոն Գևորգ Կեպենեկյանը իր առաջ խնդիր է դրել մայր հայրենիքում մարդկանց բուժելու հետ մեկտեղ տարածել իր փորձը, այն դարձնել հայ բժիշկների սեփականությունը: Դրանով հնարավոր կլինի զգալիորեն բարձրացնել հայ բժշկության որակը, ժամանակակից բժշկական սարքավորումներից օգտվելու եղանակներն ու տեխնիկան: Այսօր մայր Հայաստանում, Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտում, հայ ուրոլոգների մի ամբողջ ջոկատ է յուրացնում ֆրանսիացի բժիշկների առաջավոր փորձը: Նրանց հետ առաջիկայում կկատարելագործվեն նաև արցախցի հայ բժիշկները:

Ֆրանսահայ բժիշկների միության նախաձեռնությամբ մեծ քանակությամբ դեղորայքներ են մատակարարվել մարզի բուժհիմնարկներին, նախատեսվում է մոտակա ժամանակներս Ստեփանակերտում ստեղծել այդ միության դեղատուն: Այդ նպատակներով Ստեփանակերտում է գտնվում ֆրանսահայ հմուտ դեղագործ Վերոնիկա Ագուդջյանը: Նախատեսված է նաև մարզի հիվանդանոցների վիրաբուժարանները համալրել վիրահատման ժամանակակից սարքավորումներով և գործիքներով: Հնայած պարոն Գևորգ Կեպենեկյանի այցելությունը Ստեփանակերտ շատ սուղ էր, այնուամենայնիվ կարողացավ լինել մարզի մի շարք տեսարժան վայրերում: Հրաժեշտի ժամին ասաց.

— Արցախ աշխարհն ինձ գերեց անվերապահորեն: Հուսով եմ, որ այս այցելությունը վերջինը չի լինի:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(մեր. սեփ. թղթ.)

ԵԿԱՐՆԵՐՈՒՄ.— ● (աջից) Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի դոցենտ Անդրանիկ Մալխասյանը, Արցախի մարզային հիվանդանոցի ուրոլոգիայի բաժանմունքի վարիչ Էդվարդ Պատվականյանը, ֆրանսահայ վիրաբույժ Գևորգ Կեպենեկյանը, մարզի հիվանդանոցի վիրաբույժներ Բորիս Դանիելյանը և Վարդան Ղուկասյանը:

● Գևորգ Կեպենեկյանը մարզային հիվանդանոցում վիրահատություն է կատարում:

Լուսանկարները՝ Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆԻ